Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 3-ի N 181 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱ-ՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԵԼՈՒ

1. Սույն կարգի նպատակը Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների կամ կազմակերպությունների կողմից տրվող պաշտոնական փաստաթղթերի իսկության պարզումը և կեղծված փաստաթղթերի շրջանառության կանխումն է:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի իսկությունը պարզվում է փաստաթղթի իրականությանը համապատասխանելու հետ կապված հարցման հիման վրա: Հարցումները կարող են ներկայացվել՝

1) օտարերկրյա պետությունում բնակվող կամ գտնվող իրավաբանական և ֆիզիկական անձանցից (միայն իրենց վերաբերյալ փաստաթղթերի իսկությունն ստուգելու խնդրանքով) կամ օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից՝ համապատասխան պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների միջոցով.

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից:

3. Սույն կարգը չի տարածվում փաստաթղթերի՝ ապոստիլով վավերացման կամ հյուպատոսական վավերացման նպատակով փաստաթղթերի իսկությունը (փաստաթուղթն ստորագրած անձի պաշտոնի, ստորագրության, ինչպես նաև այդ փաստաթղթի վրա

դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը) պարզելու հետ կապված հարաբերությունների վրա։

4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը փաստաթղթերի իսկությունը պարզելու նպատակով համապատասխան հարցումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը կամ փաստաթուղթը բնորոշող տվյալները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու պետական մարմին կամ կազմակերպություն, որը տրամադրել կամ ենթադրաբար տրամադրել է համապատասխան փաստաթուղթը կամ, որը, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ունի անհրաժեշտ տվյալներ տվյալ փաստաթղթի տրամադրման հիմքերի վերաբերյալ կամ վարում է համապատասխան փաստաթղթերի հաշվառումը, կամ վերահսկողություն է իրականացնում այդ փաստաթղթերի տրամադրման նկատմամբ։

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված պետական մարմինները կամ կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հարցմանը պատասխանում են տասն աշխատանքային օրվա ընթացքում։

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված պետական մարմինների կամ կազմակերպությունների կողմից երրորդ պետական մարմնից կամ կազմակերպությունից լրացուցիչ հարցում իրականացնելու անհրաժեշտության դեպքում սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետում տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ լրացուցիչ ստուգման անհրաժեշտության մասին և հարցմանը պատասխանում են սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետը լրանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում։

7. Արտաքին գործերի նախարարության կողմից վավերացված փաստաթղթեր կամ օտարերկրյա պետություններում հավատարմագրված Հայաստանի Հանրապե-

տության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների՝ նոտարական կարգով վավերացրած կամ հաստատած փաստաթղթերի իսկությունը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է իր տրամադրության տակ եղած տվյալների, այդ թվում՝ հաշվառման մատյանների հիման վրա։

8. Սույն կարգի 4-7-րդ կետերում նշված ստուգման արդյունքներն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պատասխանն ուղարկում է հարցման նախաձեռնողին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ